

ծայեն յանուն Ս. Լ. Թոռոյս : Սմանք եւս իրենց յօժար կամօքը ընդդէմ ամենայն յորդորանաց և համոզակեր բանից Սրբազան Պատրիարք Զօր հրաժարելով Ս. Լ. Թոռոյս միաբանական իրաւունքէն և հրաժարման վրէպագիր ընդունելէն յետոյ, պտըտած տեղերնին զիրենք Ս. Լ. Երուսաղէմի միաբան կ'անուանեն և այնպէս կը ստորագրեն իրենց անունը, ինչպէս զարմանքով տեսանք հրաժարեալ Սարաիրոս փարգապետի սուրբ Կարապետի վանքէն առ Սասիսն ուղղեալ նամակին մէջ գրած ստորագրութիւնը : Յիշեալ վարդապետը ոչ միայն միաբանութենէ հրաժարեալ է, այլեւ ոչ իսկ ի սուրբ Լ. Թոռոս ձեռնագրուած է : Սուտի կը ծանուցանեմք օրհնեալ Լ. զգիս, որ այսպիսեաց ստորագրութիւն խարդախութիւն է, և է անընդունելի Ս. Լ. Թոռոյս թէ ինքը և թէ իւր ստորագրութիւնը, և կը ցանկամք որ նոյնպէս համարուի նաեւ ընդհանուր Լ. զգիս գիմացը :

Գարձեալ՝ որ եւ իցէ եկեղեցական միաբան մի, որ առանց հրաժարելոյ ի Սիաբանութենէս՝ հրամանաւ Սրբազան Պատրիարքին, կամ օդափոխութեան և կամ ուրիշ բանաւոր պատճառաւ մի յօտարութեան կը գանուի, առանց իւր վկայագիրը աչքէ անցընելու՝ իբրեւ միաբան Ս. Լ. Թոռոյս չնկատուի, վասն զի կրնայ ըլլալ որ հրաժարեալ միաբան մի մասնաւոր նկատումներով ծածկել ուղէ իւր հրաժարման վկայականը, և իբր օդափոխութեւն ելած ձեւացընել զինքը :

ըագիրը մեր Օմիւռնիոյ Սերոպեան դպրոցի ներկայ վիճակին վերայ տըւած մի քանի ստուգագոյն տեղեկութիւնները, զարարողիւն անուանած էր ընդդէմ օգույ միաբանութեան, այս անգամ իւր 786 թըւովը փութացեր է իւր խօսքը խոնարհաբար ետ առնուլ, զգալով սոյն բառիս ծանրութիւնը, և բարեմըտութեամբ գրուած ըլլալը կը խոստովանի : Սուրբ եմք մեծարոյ խումբագրին խոնարհաբարութեանը վերայ, որ կրնայ բարի օրինակ լինել և այլոց յանգէտօ սխալողաց : Իսկ եթէ դարձեալ մեր գրածները սխալ տեղեկութիւններ կը համարի, կը հրաւիրեմք զնոյնները որ ուշագրութիւն կարգան Ս. Եմուլու մէի էֆրեարը, Սասիսն ու Ս. Զմուռն, որոնց մէջ անաչառապէս բանագատութեան առնուած են և մեր ըսածներուն ճշմարտութեանը կը վկայեն :

Լրժանապատիւ Խորէն վարդապետը, որ օդափոխութեան համար երեք ամսէն ի վեր է հեռացեր էր սուրբ Լ. Թոռոս, անցեալ շաբթու վերագառնալով, սկսաւ վարել իւր առջի պաշտօնը : Յայտնի է որ յիշեալ Լրժ. Զայրը Տպարանի տեսուչ է և միանգամայն Սուսումնական խորհրդոյն անգամ : Լ. Եմուռնապատիւ Սրբազան Պատրիարքը իրեն յանձնեց նաեւ այս անգամ Երուսաղեմի դպրոցի մէջ կրօնագիտութեան դասատուութիւնը :

— Լնցեալ ամսոյս մէջ Երուսաղեմի դպրոցին համար երկու աշակերտացու եւս գալով, մէկը Օվաճրգէն Սերովիէ Պօղոսեան և միւսը Շապին — զարահիսարէն Յովհաննէս Տատեան անունն. որոնք Լատին վա-

Երշալոյս Երարաբեան լրագրոյ լէջումը :

Յայտնի է մեր բարեմիտ ընթերցողաց, որ Երշալոյս պատուական

նաց բժշկին (1) քննութեանը յանձնը
ւելով և իրենց մարմնոյ առողջ կազ
մուածքը բժշկին վկայութեամբը ըս
տու գտելով, Ուսումնական խորհրդ
դոյ միջոցաւ կարգեցան ի շարս Եւ
ռանգաւորաց :

Ահաւասիկ բժշկին վկայագիրը :

J. E. J.

Attesto io sottoscritto d'avere visitato i due
giovani, Serafino di Paolo di Ovagik, e Giovanni
Dadian di Sciabinkarahissar, e di averli essi trovati
di robusta costituzione.

In fede di che, etc.

Dal convento del
S S^{mo} Salvatore
Gerusalemme 3/10 66

Fr. Pier. Giov.
Franc. Medico.

— Աղագիայէն խրկուած Վէսապ
ցի տիրացու Ստեփանը, որ ինչպէս
Սիօնի 8 թուոյն մէջ գրած եմք, յու
լիս 31 ինքս հանայ ձեռնադրուելով,
և իւր քառասնօրեայ կրթութիւնը
ըացընելով՝ անցեալ շաբթուս իւր
երկիրը խրկուեցաւ, ուր տեղ ժո
ղովուրդը մեծ կարեւորութիւն ու
նին քահանայի :

Ամենապատիւ Սրբազան Պատրի
արք Նայրը Պօլիս եղած ժամանակ,
Ստեմաշուք Յովհաննէս Պէյը Տատ
եան բարեհաճած էր նուիրել սուրբ
Աթուոյս՝ ի յիշատակ անուան իւ
րոյ հետեւեալ պատուական գրք
քերը, զորս թէպէտ եւ անագան,
այլ լի երախտագիտութեամբ սրտի
կը փութամք յիշատակել հոս զանոնք,
որք են ընդ ամենը 47 կտոր :

Աղլաս, աշխարհացոյց տախտա
կաց գիրք՝ Եւրոպիոյ միայն, 3 հատոր՝
փառակաղմ :

Տնկաբանութեան գիրք (Flora Flu-

minensis) 2. Յովսէփ Մարիանօ Վէլ
լոզոյի, յորում պարունակին հան
դերձ պատկերօք՝ Պրագիլիոյ մէջ գըտ
նուած տունկերը. 11 հատոր՝ ընտիր
կաղմ :

Վարձեալ 5 հատոր գիրք տնկա
բանութեան՝ ուրիշ հեղինակէ յօրին
եալ, պատկերազարդ :

Ճանապարհորդութի շուրջ զաշ
խարհաւ, հրամանաւ Առի ժեթա
գաւորին Վաղղիոյ, յօրինեալ պատ
մաբանօրէն ի Առի տը Վրէսինէ, 4
հատոր :

Պատմութիւն բրածոյ տնկոց, յօ
րինեալ Ալտօլֆ Պրօնկեարէ (M. Adolphe
Brongniart). միակ հատոր : Երկրորդ
հատորն է նոյնին Աղլասը, այսինքն՝
երկրի իւրաքանչիւր խաւերուն մէջ
գտնուած տունկերուն պատկերները :

Պատմութիւն՝ այգիներուն մնա
սակար եղող միջատաց, և ի մասնա
ւորի Դիւրալի վերայ : Միակ հատոր
պատկերազարդ :

Բնդհանուր դիտողութիւնք ան
դամազննութեան յօդաւոր կենդան
եաց՝ համեմատօրէն. Հեղինակու
թիւն Հերքիւլ Սթրանսդուրքէյմ (Her
cule Strandsdurckheim), միակ հատոր պատ
կերազարդ :

Տարրական Աղլաս տնկաբանու
թեան (Atlas élémentaire de Botanique), ո
րուն մէջ կան 2340 պատկեր :

Օրագիր գործնական երկրագոր
ծութեան, պարտիզաց մշակութեան
և ընտանեկան խնայողութեան. յա
մէ 1837—1844. ամբողջ 8 հատոր
պատկերազարդ :

Վեղջկական տուն (Maison rustique du
XIX siècle), 5 հատոր :

Քաղուածք դասուց ուսմանց շին
ուածոց կամ ճարտարապետութեան
կամընց և թումբից, Ս. Ի. Սկանզի
նէ. (M. I. Sganzin) :

(1) Սուրբ Աթուոյս հոյազգի բժիշկը երեք ամ
սէ ի վեր մեկնած ըլլալով, մինչեւ նոր բժշկին գա
լը ստիպուած է Ս. Աթուս օտար բժշկաց քննու
թեանը յանձնել զնորեկ պատանները :

Վիրք անասնաբուժութեան (Traité d'hygiène vétérinaire), 2 հատոր:

Բառգիրք՝ բնական գիտութեանց մէջ գործածելիք բառից, հանդերձ ստուգաբանութեամբ արմատական նշանակութեանց, 2 հատոր:

Բառգիրք՝ ի հայէ ի ռուս, աշխատասիրութիւն լեզբսանդրի Սակարեան Խուգաբաշեանց, տպեալ ի Սուկուս, 2 հատոր, փառակաղմ և ոսկեզօծ:

ՆՈՐ ՕՐԱՅՈՅՑ

1867 ամի օրացոյցն սուրբ Աթոռոյս Տպարանին մէջ ի լոյս ընծայուելով, կը փութամբ Սիաբանութեանս կողմէն ջերմ շնորհակալութեամբ իւր երախտագիտութիւնը յայտնել խառ գիւղի Ս. Ստեփաննոս եկեղեցւոյ Արժ. Տէր Լեւոնի քահանային, որ բարեհաճեցաւ տօմարագիտութեան հարկաւոր ուսմունքը Սիաբանութեանս աննախանձաբար հաղորդելով՝ անոր ազատ հաճութեանը թողուլ ուզած ժամանակ, հրատարակելու ազգային օրացոյց: Եւ Սիաբանութիւնս հանդերձ Ամենապատիւ Սրբազան Պատրիարք Հօր՝ որ քան որ երախտագիտական արդեամբք ճանչեց ու պատուեց զյիշեալ Արժ. Հայրը, այսու ամենայնիւ իրեն պարտաւորութիւն սեպեց նաեւ ըստ յատուկ խնդրանաց աստուածասէր քահանայիս, անոր առ սուրբ Աթոռոցոյ տուած սոյն շնորհքը արձանագրել ի տումարի վանացս յանմուտաց յիշատակութիւն ասպագայից:

Նաեւ ըստ խնդրոյ Արժ. Հօր՝ սոյն տօմարական գիտութեան հետեւող և ուսանող եկեղեցականք իրենց նուիրական պարտք պիտի հա-

մարին, նախ յիշատակել միշտ նորանունը ի ժամ՝ մատուցման սուրբ Պատարագին, երկրորդ՝ Սիաբանութեան գուրս եղող անձանց չսովորեցընել: Սոյն բարեպաշտական թէութիւնները հաստատ պահելու խոստմամբ՝ առաջիկայ 1867 տարւոյն օրացոյցը փութաց Սիաբանութիւնս ի լոյս ընծայել, և սեպտեմբեր ամսոյն մէջ Ամենապատիւ Սրբազան Հայրը կանխեց իւր բոլոր միաբանից մէկ մէկ հատ ընծայել, բարեմաղթելով անոնց ընդ մերձակայ նոր տարւոյս՝ նաեւ անձանձրոյթ յարատեւութիւն ուսմանց և գիտութեանց և բարենախանձ ոգւով միշտ ի յառաջագիւնութիւն կրթելու յօգուտ ընդհանուր Ազգիս և ի պարծանս Սուրբ Ուխտիս:

Յիշեալ օրացոյցը կը ծախուի ի Պօլիս ամեն գրավաճառաց խանութը:

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆՔ

ՀԱՐՑՄՈՒՆՔ ԹՈՒԱԲԱՆԱԿԱՆՔ

(Տես թիւ 7 երես 108):

Ե. Հարցման լոծոմբ՝ լեւելիք ընդ ամենայն յոնի 420: Ը. Հարցման լոծոմբ՝ հասանելին յառար 25: Թ. Հարցման լոծոմբ՝ լեւելիք վարաղն 360 լեւր: Ժ. Հարցման լոծոմբ՝ լեւելիք լոգն 240 լեւր: ԺԱ. Հարցման լոծոմբ՝ ունէր վաճառահանն Դահեկանս 2376: ԺԲ. Հարցման լոծոմբ՝ լեւելիք նաւին 42 Դրամ:

Հարցման ԺԳ.

Ոմն յաշակերտաց իմոց առեալ խնձորս գեղեցիկս ի խարայ, գայր ընծայեցուցանել ինձ. պատահեցան նմա երեք պարկ ի խազուց. և հա-